Ð³ÛÎñÃ³Ï³Ý ÐÇÙÝ³ñÏáõÃÇõÝ
Armenian Educational Foundation, Inc.
600 West Broadway Suite 130 Glendale, CA 91204 Tel (818) 242-4154 Fax (818) 242-4913
www.aefweb.org

2010-2011 թթ. ուսումնական տարվա
կրթաթոշակի մրցույթ

Մրցույթին մասնակցության հայտ ներկայացնելու հրավեր

Հայ Կրթական Հիմնարկությունը հայտարարում է 2010-2011թթ. ուսումնական տարվա համար կրթաթոշակների մրցույթ: Կրթաթոշակները տրամադրվում են տվյալ ուսումնական տարվա վարձավճարի չափով՝ խրախուսելու և նպաստելու գերազանց առաջադիմությամբ և շնորհաշատ, և միևնույն ժամանակ ֆինանսական անբարենպաստ պայմաններում գտնվող ուսանողներին:

Մրցույթին կարող են մասնակցել
ՀՀ պետական ԲՈՒՀ-երի 2-րդ և բարձր կուրսերի ուսանողներ:

Կրթաթոշակները կտրամադրվեն **Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին**, որոնք բնակվում են Երևանում և Գեղարքունիք, Շիրակ, Տավուշ, Արագածոտն, Արմավիր, Կոտայք, Լոռի, Սյունիք, Վայոց Ձոր, Արարատ մարզերում, ինչպես նաև **Ղարաբաղի բնակիչներին և Ջավախքում բնակվող ազգությամբ հայ այն ուսանողներին, ում ակադեմիական առաջադիմության միջին նիշը առնվազն 4 (չորս) է**:

Առավելություն կտրվի հատուկ կարիքներ / հաշմանդամություն ունեցող, ծնողազուրկ, ազատամարտիկների և բազմազավակ (հինգ երեխա և ավելի) ընտանիքների ուսանողներին:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է. լրացնել Կրթաթոշակի հայտը և մինչև **2010թ. մայիսի 15-ը** ներկայացնել *Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամ ՀՀ, ք. Երևան, Ջրաշատ փ., տուն 35 հասցեով:*

Հայտի ձևը կարող եք ստանալ վերոնշյալ հասցեից կամ www.cdpf.am և www.aefweb.org վեբ կայքերից:

Հետաքրքված անձանց համար կկազմակերպվեն ներածական հանդիպումներ, որոնց մասնակցելու համար, ինչպես նաև մանրամասն պարզաբանումների համար խնդրում ենք դիմել Լիլիթ Հովհաննիսյանին հետևյալ հեռախոսահամարներով (374 10) 519027, 589535 կամ lilit@cdpf.am էլ. փոստով: